



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«25» փետրվարի 2013թ.

N \_\_\_\_25\_\_

**ք. Ստեփանակերտ**

**«ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-ԻՆ ՏՐՎԱԾ ԲՈՒՅՍԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ)  
ՎԱՃԱՌՔԻ ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 7-րդ մասի պահանջներով ու հիմք ընդունելով ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 25-ի N 2 եզրակացությունը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Ուժը կորցրած ճանաչել 2011 թվականի փետրվարի 22-ին «Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին տրված N 000013 բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի լիցենզիան:

2. Նախարարության աշխատակազմի տնտեսական վերլուծության բաժնի պետին՝ ապահովել սույն հրամանի առաքումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

**ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ**

